


ՅԻՄՆԱՄԵԱՅ ՅՈՒԵԼԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵՂՈՒԱՅ.



այսի 13-ին մեծ եւ փառաւոր ազգային հանդէս մը պիտի կատարուի Մոսքուայի մէջ, որ է Լազարեան ազգասէր Իշխանապետաց մերոց հիմնած հոյակապ ձեմարանին յիսուն տարուան Յոբելեանը: Արդէն ամիսներով առաջ պէտք եղած պատրաստութիւնները տեսնուած են որ այն մեծաշուք հանդէսը արժանաւոր վայելչութեամբ կատարուի. եւ մեք անձկանօք կսպասեմք ընդունել անոր պաշտօնական եւ ամբողջ նկարագրութիւնը որ սիրով եւ ուրախութեամբ հրատարակեմք ամսագրոյս մէջ:

Վիճակիս Գերապատիւ Առաջնորդը, — որ մի է յԱնդամոց Պատուոյ Խորհրդարանի ձեմարանին, — ոչ միայն պարտուպատշաճ մեծարանօք ուրախակցութեան եւ բարեմաղթութեան նամակ մը գրեց այս առթով առ Վսեմափայլ Հոգաբարձու ձեմարանին՝ Աղա Խաչատուր Յովակիմեան Լազարեանց, այլ եւ պատուիրեց որ Խալիպեան Ուսումնարանին մէջ այն օրը արտաքոյ կարգի հանդիսաւոր ուրախութիւն մը լինի. բոլոր աշակերտք ներկայ գտնուին առաւօտը ոչ միայն սուրբ պատարագին, այլ եւ Հանգստեան պաշտօնին՝ որ պիտի կատարուի յետոյ ի յիշատակ հանգուցեալ Հիմնադրաց ձեմարանին եւ բովանդակ Լազարեան բարեպաշտ եւ հայրենասէր Ազգատոհմին ննչեցելոց հոգւոցն: Եւ այսպէս հատուցանեն եւ նոքա ըստ իմիք այն երախտագիտութեան սրբազան պարտքը՝ զոր ունի ազգս մեր եւ պէտք է ունենայ յաւիտեան առ Վեհազնեայ Տունն Լազարեանց եւ առ Լազարեան ձեմարանն, եւ զոր ի դիմաց նոյն աշակերտաց եւ համօրէն հայկազեան մանկտւոյն փոքր ի շատե կբացատրէ առաջիկայ ոտանաւորը.

Ի ՀԱՆԳԻՍ

ՅԻՍՆԵՐԵԱԿ ՅՈՒԵԼԻՆԻ

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՅ

ԱՌ

ՎԱՆՄԱՓԱՅԼ ԻՇԽԱՆԱՊԵՏ

ԻԱԶԱՏՈՒՐ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ԼԱԶԱՐԵԱՆՑ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ՃԵՄԱՐԱՆԻՆ

ՆՈՒԱԳ.

Որ ի ճակատ հոյակապ ձեմարանիդ Լազարեան
Վարազաթեա տարածեալ սրփուես նըշոյլըս վըսեմ
Ի թանձրամածըն խաւար յոր դանդաչէր Հայաստան,
Զինչ յարատեւ, ասա ցիս, ի կենցաղումըս նըսեմ. —

Զինչ, եթէ ոչ յիշատակ հայրենասէր Վեհազանց,
Որք Հաւատով գօտէպինդ, Յուսոյ զրահիւ անսասան,
Եւ լուսաբորբ ի ձեռին ջահ Սէրըն սուրբ համազգեաց,
Տաճարս կանգնեն իմաստից, մարդից լեզուաց բազմազան:

Թէ անմոռաց են առ մեզ Հայկ եւ Տիգրան եւ Արամ,
Եւ Լազարեանցըն բարիք ոչ մոռասցին յաւիտեան.
Վըկայք սերկեանս Յիսնեբեակի, սանք Լազարեանց խուռներամ:

Սանք հայկազնեան Վարժերոյ, պըսակս առէք ձիթենի,
Մաղթեցէք Վեհ Տաճարին հազար եւ բիւր Յօբելեան. —
Զեզ թէ հասցէ հարիւրեակ, ձեզ եւ Ազգիս երանի:

Յամի Տեառն 1865, ի Մայիսի 12.

Եւ ի մերումս բուարերութեան ՌՅԺԳ յԱննկանի Իէ.

Ի ԹՎՈԴՈՍԻԱ.

Ի դիմաց աշակերտաց

Խաչիպեան Ռաւոմնարանի ազգիս Հայոց

եւ հաւօրեն հայկազն մանկւոյն.

Այս նուագէն ոսկէտառ եւ հասարակ տպագրութեամբ բազմաթիւ օրինակներ յուղարկուեցան ձեմարանը՝ որ հանդիսին օրը կարդացուին:

Կլեմք Լազարեան ձեմարանէն ելած աշակերտները ամէն տեղ, այսինքն յԱժտերխան, ի Թիֆլիզ, ի Նախիջեւան եւ ուրիշ հայաբնակ քաղաքներ, միաք ունին նոյն օրը վայելուչ հանդէսներ կատարելու, եւ դիւրութիւն կամ կարողութիւն ունեցողները անձամբ եւս ներկայ գտնուելու բուն հանդիսին ի Մոսքուա:

